



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 26-Ի N 74-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝
որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի մարտի 26-ի
«Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հարուկ) խմբերի ցանկում չընդգրկված
անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով
բժշկական օգնություն և սպասարկում սրանալու նպատակով բժշկական կազմակերպություններ
ուղեգրող հանձնաժողովների ձեւավորման և գործունեության աշխարակարգը հաստատելու
մասին» N 74-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ
փոփոխությունները.

1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) *Անի Զիլինգարյան* - հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզպետի օգնական,

2) *Վահե Հովհաննիսյան* - հանձնաժողովի քարտուղար՝ Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ
բաժնետիրական ընկերության բժիշկ-վիճակագիր (*բաժնի պետ*),»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2019 թվականի մայիսի 17
ք. Հրազդան
N 109-Ա

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ